Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-1151-02.05.2011-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի /այսուհետ՝ օրենսգիրք/ 125-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 125. Արագացված դատաքննության հիմքերը

1. Դատարանն կիրառում է արագացված դատաքննություն, եթե՝

1) կողմերը գրավոր համաձայնություն են ներկայացրել գործը արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ, կամ

2) կողմերը գրավոր տեղեկացրել են դատարանին դատաքննությանն իրենց չմասնակցելու մասին,

կամ դատարանը հանգում է այն եզրակացության, որ

3) գործի էությունից բխում է դրա անհապաղ քննության անհրաժեշտությունը.

4) գործով ապացուցման ենթական փաստերի մասին հնարավոր է եզրակացության հանգել գործում առկա ապացույցների հետազոտման եւ գնահատման հիման վրա եւ չկա իրավունքի հետ կապված վեճ,

5) հայցն ակնհայտ հիմնավոր է, կամ

6) հայցն ակնհայտ անհիմն է:

2. Արագացված դատաքննություն կիրառելու հիմքեր են, մասնավորապես, այն դեպքերը, երբ՝

1) պահանջը հիմնված է անվիճելի իրավունքի վրա՝ նախապես գնահատված վնասով.

2) ներկայացվել է հայրությունը որոշելու հետ չկապված ալիմենտներ բռնագանձելու վերաբերյալ պահանջ.

3) ներկայացվել է աշխատանքային վեճի հետ կապված պահանջ.

4) չեն ներկայացվել պահանջը հաստատող ապացույցներ:

3. Արագացված դատաքննություն կիրառելու մասին դատարանը կայացնում է որոշում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 126-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 127-րդ հոդվածի առաջին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ «Եթե գործի արագացված դատաքննության ընթացքում դատարանը գալիս է համոզման, որ վերացել են արագացված դատաքննության հիմքերը, դատարանը որոշում է կայացնում արագացված դատաքննություն չկիրառելու մասին:»:

Հոդված 4. Օրենսգրքի 128-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 128. Արագացված դատաքննության կարգը.

Արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշում կայացնելուց հետո դատարանը անցնում է՝ գործը ըստ էության լուծող դատական ակտի կայացմանը:»:

Հոդված 5. Սույն օրենսգիրքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ռ.Պետրոսյան	125-րդ հոդվածի 2-րդ մասում ներառել առաջին կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «1) Պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա», իսկ այնուհետև՝ ինչպես տեքստում է:	Չի ընդունվել է.	Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ միայն այն համգամանքը, որ պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա բավարար չէ, որպեսզի կիրառվի արագացված դատաքննություն: Այստեղ էականը պետք է լինի, որպեսզի պահանջը հիմնված լինի անվիճելի իրավունքի վրա, որի դեպքում գործարքի գրավոր ձևը նշանակություն չպետք է ունենա: Եթե պահանջը հիմնված լինի անվիճելի իրավունքի վրա՝ նախապես գնահատված վնասով, ապա բոլոր դեպքերում կկիրառվի արագացված դատաքննություն՝ անկախ գործարքի ձևից: Այսպիսով, գտնում ենք, որ եթե պահանջը հիմնված է անվիճելի իրավունքի վրա, այն, ըստ էության իր մեջ ներառում է գործարքի բոլոր ձևերը: